

- 131 Բաբունս յայնժամ ի Սամաթիա
Յեկեղեցւոջ Սուրբ Կէորգեայ
Բամբր բզբաշխ էջմիածնայ
Անհաս գործոյն Տեառն Յակոբայ :
- 132 Սա ընդ գայուստ Սարգսի հըրճուէր,
Զոր զայն գիշեր առ իւր պահէր,
Իսկ լըրտես ոք աճապարէր,
Պատրիարքին զայն ինչ ազգէր :
- 133 Յակոբ ի նոյն ի գիշերին
Բացեալ զճերան իւր քրսակին
Շահեալ ընդ այլս զՉաւուշպաշին՝
Առնոյր զօգատճէն հրովարտակին :
- 134 Ապա ի միւս աւուր յայգուէ
Այլ ոք Չաւուշ ի գրանէ
Կարգիւր կալնուլ զայն ուր եւ է
Տանիլ անդ ուր միւս Չաւուշն է :
- 135 Արդ սոյն Չաւուշ մինչ բշտապաւ
Հրավարտակին օրինակաւ
Ի Սամաթիա երթայր նաւաւ
Նա իսկ անտի գայր նաւակաւ :
- 136 Ի մերձենալ նոցա միմեանց
Հուպ նոր գըրան ներկարարաց
Չաւուշին փոյթ լըրտեսն յայտնեաց,
Սարգիսն այն է զնա կալ ասաց :
- 137 Չաւուշն իսկոյն մատնեալն էառ
Յիւր իսկ նաւակ բերեալ պատճառ,
Թէ ունիս Գու ոսոխն անճառ
Անց ի նաւ իմ շոյտ անբարբառ :